

Ս. ԷՋՄԻՍԺՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԵՒ ՌՈՒՍԱՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՐԱՅԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ. ԺԱԳՈՒՄԸ

Ս. Էջմիածնի ամենայն հայոց Մայր Աթոռի պաշտօնական
յարաբերութիւնները ուստաց կառավարութեան հետ սկսում
են ԺԸ. դարու երկրորդ կիսից՝ Եկատերինէ Բ. Կայսրուհու օրով:

Այդ ժամանակից առաջ տեղի ունեցած Պետրոս մեծի
յարաբերութիւնները Հայաստանեայց Սկեղեցու պաշտօնեաների
հետ՝ նորա արեւելեան քաղաքականութեան համեմատ, որի մէջ
մտնում էր նաև Կասպից ծովի ափերի գրաւումը Պարսիկներին՝
կատարուել էին ոչ թէ գերագոյն հոգևոր իշխանութիւն ունե-
ցող Ս. Էջմիածնի հայրապետների, այլ Գանձասարի կաթողի-
կոսների հետ, որոնք նստում էին Գանձասարի վանքում, Շուշուայ
մօտերքը (Նիսավէտպօլի նահանգ):

Հայոց եկեղեցու մի քանի փառամոլ ներկայացուցիչներ
Ս. Էջմիածնի Աթոռի ընկճուած դրութիւնից օգուտ քաղելով,
ձգտում էին ինքնագլուխ եկեղեցական կենդրոններ կազմել և
կաթողիկոսի տիտղոս սեփականել: Այդպէս էր յառաջ եկել
Գանձասարի կաթողիկոսութիւնը Պարսկաստանում, որը գոյ-
ութիւն ունեցաւ մինչև Ղարաբաղի խանութեան միացումը
Ռուսաստանի հետ. որի իրաւասութեան տակ այն ժամանակ ճա-
նաչուաւ էին միայն Գանձակի (Նիսավէտպօլի) նահանգում և
Կասպից ծովի եզերքներում բնակուող հայերը: Սակայն այդ

միջոցին անգամ Գանձասարի կաթողիկոսները ճանաչում էին էջմիածնի կաթողիկոսների գերազանցութիւնը, որովհետեւ նրանց էին դիմում ամեն տարակոյաների, թիւրիմացութիւններէ և վէճերի ժամանակ: Նոցա անկախութիւնը միայն իրանց հօտի վարչական գործերի վերաբերութեամբ էր:

Էջմիածնի Աթոռն իւր միացնող զօրութեան և բարոյական ազդեցութեան անխափան յարատեւութիւնը պարտական է, ի միջի այլոց, ժէ դարում նշանաւոր հանդիսացած մի շարք կաթողիկոսների, որոնք յաջորդաբար, իրենց անձնական հեղինակութեամբ գիտեցան պարտուպատշաճ բարձրութեան վրայ պահել այդ Աթոռը մահմեդական բռնութիւնից և կաթոլիկ քարոզիչների որոգայթներից՝ պատասպարելով իրենց հօտը:

Արժ. Աղանեանց Գիւտ քահանայի Վիւան Պատմութեան Հայոց վերնագրով հրատարակած ս. էջմիածնի հայրապետների կոնդակների հաւաքածուն մի զարմանալի տեսարան է պատկերացնում: Այդ հայրապետները, թէպէտ և ընկճուած իրենց բնակավայրում, երբեմն նոյն խակ ազատութիւնից զրկուած և յետին կարօտութեան մէջ լնկած, գիտէին դարձեալ ամուր բռնել վարչութեան ղեկն իրենց ձեռքում, այնպէս որ ամեն տեղ, ուր վճռելու խնդիր կար, էջմիածնի կաթողիկոսների բարոյական հեղինակութեան էին դիմում և նրանց հրամանն անսպաժաք կատարում կասպից ծովի սփերից սկսած մինչև Պարսկական ծովածոցը:

1763 թ. էջմիածնի Աթոռը բազմեց Հայաստանեայց եկեղեցու ականաւոր հովուապետներից մէկը՝ սրբազնագոյն Սիմէոնը:

Նա մի մեծանուն տոհմի շառաւիղ էր և պատանեկան հասակից աչքի էր ընկնում իւր խելքով, հմտութիւններով, հեզ բարքով և քարոզչական տաղանդով: Իեռ սարկաւազ էր, երբ այլ և այլ պատուէրներով առաքուեցաւ Պարսկաստան, Թիւրքիա, Հնդկաստան և արժանի հանդիսացաւ այն մեծ վատահուսթեան, որ ընծայում էին իրեն. նրան ամեն տեղ սիրում էին և յարգում, և նա բարի յիշատակ թողեց ազգի մէջ:

Մինչ Սիմէոնը Կ. Պօլսից էջմիածին գալու վրայ էր, հայրապետական Աթոռը Յակոբ կաթողիկոսի մահուամբ թափուր մընաց, և նա էջմիածին հասնելուն պէս կաթողիկոս ընտրուեցաւ (1763 թ.): Ամենուրեք ցրուած հօտի կարիքներին լաւ տեղեակ սրբազնագոյն Սիմէոնը, չնայելով ձախող քաղաքական հանգա-

մանքներին և Մայր աթոռի աղքատիկ միջոցներին, հաստատամտութեամբ ձեռնամուխ եղաւ այն ծրագրի իրագործման, որ մշակել էր իւր բեղմնաւոր, լայն մաքում. Նախ վանքը մի քարաշէն պարսպով պատեց, յետոյ էջմիածնում և շրջակայքում այլ և այլ շէնքեր հիմնեց, մի թղթի գործարան և մի տպարան հաստատեց. այնուհետեւ պաշտպան հանդիսանալով մեր եկեղեցու դաւանութեան ու համարութեան՝ սկսաւ աստուածաբանական գրքեր լոյս ընծայել կաթողիկոսների քարոզութիւններին դէմ, որ տարածուէ՞ր հայերի մէջ: Իրեւ վարչական անձն կարգ ու կանոն մտցնելով ամեն տեղ, խստիւ պատժում էր զանցառուներին և միևնոյն ժամանակ զօրացնում էջմիածնի գերագահութիւնը Գանձասարի և միւս մասնաւոր հակաթոռ կաթողիկոսների վրայ: Այսպիսի գործունէութեամբ կարճ միջոցում վատահոլութիւն ու հռչակ ստացաւ հայերի մէջ, և ժրաջան կաթողիկոսին համակրող ազգը չզլացաւ նրա թաղէս օգնել նրան յօժարակամ նուէրներով: Սիմէոնի ժողովրդականութիւնն ու ազդեցութիւնը միայն իւր հօտի մէջ չէր սահմանափակուած, նրա աջակցութեան դիմում էին թէ՛ վրաց Իրակլ Թագաւորն և թէ՛ հարևան խաները, և նա իւր միջամտութեամբ քանիցս անգամ երկիրը փրկեց իրևանի խանի սպառնացած աղէտներից և աւերմունքից: Անտարակոյս մի նշանաւոր քաղաքագիտական գործ էր Սիմէոն կաթողիկոսի ռուսաց կառավարութեան դիմելը և առաջին անգամ պաշտօնական յարաբերութիւններ հաստատելը Պետերբուրգի դրան հետ:

Իեռ Պետրոս Մեծի ժամանակից ի վեր հայ ազգի մէջ արմատացած էր այն համոզմունքը, թէ Ռուսաստանը կը փրկէ նրան մահմեդական տիրապետութեան դարևոր լծից. այդ ակնկալութեամբ Սիմէոնի նախորդ Յակոբ կաթողիկոսը 20 յուլիսի 1760 թ. դիմած էր ռուսաց կայսրին մի ուղերձով, որի մէջ խնդրում էր «զազգն մեր ողորմելի և զազգն վրաց հոգալ»: Սակայն այդ ընդհանուր և անորոշ խօսքերով արտայայտուած խնդիրը ոչ մի հետևանք չունեցաւ, մասնաւոր որ ժամանակի պարագաներն էլ նրա յաջողութեան ձեռնառ չէին:

Աւելի շրջանկատ ընթացք բունց այդ գործում գերերջանիկ Սիմէոնը, մասնաւոր որ մի յարմար առիթ էլ ունէր ռուսաց կառավարութեան դիմելու.— Աժտարխանի հայերը թօթափել էին Մայր Աթոռի իրաւասութիւնը և Գանձասարի կաթողիկոսի իշխանութեան տակ մտել: Սիմէոն հայրապետն այդ

դէպքից վատացած եպիսկոպոսներին խորհրդի կանչեց և գործօհանգամանքները քննելուց յետոյ, որոշեց Պետերբուրգ ուղարկել Դաւիթ վարդապետին մի օրհնութեան կոնդակով, ուր խընդրում էր. «1) որ ս. Գրիգորի՝ Հայաստանի Լուսաւորչի դաւանութեան հետեող ռուսիարեակ հայերը, ինչպէս մինչև այժմ, նոյնպէս և ապագային ս. Էջմիածնի Մայր Աթոռի իրաւասութեան և իշխանութեան ներքոյ մնան հոգևոր և եկեղեցու վարչական գործերում. 2) որ նրանց վրայ կարգուող եպիսկոպոսն այդ Աթոռի կողմից ընտրուի, իսկ Հայրապետին անյայտ և ուրիշ երկիրներից եկաւոր ինքնակոչ հովիւների մուտքն արգելուի. 3) և նրան մի Բարձրագոյն հրովարտակ շնորհուի, որը այն տեղի տաճարում մնայ ի նշան մշտական ողորմածութեան և ի յիշատակ. բարեյաջող թագաւորութեան»։ Այս կոնդակը գրուած է 1 օգոստոսի 1766 ամիւ Կոնդակի հետ ընծայ ուղարկուեցան կայսրուհուն և թագաժառանգին Յովհաննէս Մկրտչի, Հռիփսիմէ կուսի, ս. Գէորգի մասունքն և Նոյեան տապանի մի մասը։

Միևնոյն ժամանակ Սիմէոն կաթողիկոսը կոնդակներ գրեց Աժդարխանի ռուսաց Մէքօդիյ եպիսկոպոսին և Պետերբուրգում ու Մոսկվայում բնակուող հայերից մի քանիսին խնդրելով, որ Դաւիթ վարդապետի առաքելութեան յաջողութունն նպաստեն։

Մայր Աթոռի դեպանութիւնը բարեսէր ընդունելութիւն գտաւ Պետերբուրգի դրան կողմից։ Կայսրուհու հրամանով արտաքին գործոց Յանձնաժողովը յօրինեց մի հրովարտակ յանուն կաթողիկոսի և յանձնեց Դաւիթ վարդապետին՝ Նորին Սրբութեան հասցնելու համար։

Այդ հրովարտակում, որ գրուած է 30 յուլիսի 1768 թ., կարգում ենք, թէ Վատ օրինակի նախնեաց՝ Մեզ ևս հաճելի է Մեր կայսերական զթութիւնն ու մարդասիրութիւնն ընծայել թէ արդի գերագնիւ Սիմէոն կաթողիկոսին և թէ նրա հայրապետական աթոռի ասպագայ յաջորդներին, ինչպէս և իւզբաշիններին ու կառավարիչներին և բովանդակ ազնուաբարոյ Հայ ազգին։ Հաճելի է մեզ նաև թոյլատրել յիշեալ Սիմէոն կաթողիկոսին և նրա յաջորդներին, որ նրանք հոգևոր գործերի և եկեղեցական ծէսերի նկատմամբ՝ իրենց իրաւասութեան ներքոյ պահեն Ռուսաց Կայսրութեան մէջ բնակուող հայազգի ու հայադաւան մարդկանց... այս պատճառով՝ երբ որ դրանք պա-

հանջեն մի հայ արքեպիսկոպոս և կամ մի ուրիշ աստիճանի հոգևոր անձն առաքել իրենց մօտ, թող այդ պաշտօնեաները նոյն ինքն հայրապետի վկայագիրն ունենան և առանց այդ վկայագրի Մեր պետութեան մէջ չընդունուին... Բացի այդ՝ եւրաշխաւորում ենք յիշեալ վեհազնեայ Սիմէոն կաթողիկոսին և ազնիւ իւզբաշիներին ու կառավարիչներին և ամբողջ ազնուաբարոյ Հայ ազգին և մանաւանդ ուստաց կայսրութեան մէջ բնակուող հայերին Մեր Բարձրագոյն Կայսերական շնորհն ու հովանաւորութիւնը. և ընդ սմին ծանուցանում, որ Սիմէոն հայրապետի կողմից Դաւիթ վարդապետի ձեռքով Մեզ առաքուած մասուկները... առանձին հաճութեամբ ընդունած ենք... և յիշեալ Դաւիթ վարդապետը... կարող է բերանացի հաղորդել համայն Հայ ազգին Մեր Կայսերական շնորհի և բարեսիրութեան հաւաստիքը, որով կամք և մնամք...» Այս հրովարտակի պատճէններն առաքուեցան պարտուպատշաճ գործադրութեան համար Ամտարխանի և Կիեւլի գեներալ Նահանգապետներին:

Դաւիթ վարդապետն այդ Բարձրագոյն հրովարտակից զատ Էջմիածին տարաւ մատուցանելու հայրապետին նաեւ մի նամակ մինիստր կոմս Ն. Յ. Պանինի կողմից և ընծաներ արքունի տանից — «մի քանի կտոր դիպակ և գազ, յապացոյց», ինչպէս գրում էր Պանին կոմսը, «նորին Մեծութեան առանձին արքայական բարեհաճութեան յատկապէս դէպի Ձերանձը»:

Կոմս Ն. Յ. Պանինը վերոյիշեալ նամակում, ի միջի այլոց, գրում էր հայրապետին, զթէ Ձեզ և թէ ամբողջ ազնիւ Հայ ազգին ուղղուած ամենաշնորհ հրովարտակից հանգամանօրէն կիմանաք, թէ Նորին Կայսերական Մեծութիւնն ինչպիսի յօժարութեամբ բարեհաճեց զիջանել յիշեալ Դաւիթ վարդապետի ձեռքով Ձեր առաքած խնդրին և ինչ առանձին արքայական հաւանութեամբ ընդունուեցան նրա բերած մասուկնք և Նոյեան տապանի մասնիկ: Բաղցր է ինձ, յարում է կոմսը, «որ կարողացայ այս առթիւ իմ կողմից մի փոքր ծառայութիւն մատուցանել Ձերդ Սրբութեան և ըստ կարելոյն նպաստաւոր լինել Ձեր փափագի կատարման, որի մասին այս գրութիւնս բերողը չի զանայ վերադառնալուն պէս անձամբ զեկուցում տալ Ձերդ սրբութեան»:

Դաւիթ վարդապետի առաքելութեան այդ աստիճանի յաջող ելքը մեծ յոյսեր ներշնչեց սրբազնագոյն Սիմէոնին: Այսու-

հետև ոչ միայն Հայոց ազգը, այլ և եկեղեցին և մայր Աթոռը կարող էին դժուար պարագաներում ապաւինել ռուսաց կառավարութեան հովանուն և օգնութեան, եկատերինէ Բ., իբրև հետևող իւր մեծ նախորդի արեւելեան քաղաքականութեան, որ խոստացած էր «իւր յատուկ զթութեան և հովանաւորութեան տակ առնել հայոց ազգը», վերոյիշեալ 30 յունիսի 1768 թ. հրովարտակովակիզը դրաւ այն յարաբերութիւններին, որոնք շատ արդիւնաւոր եղան Անդրկովկասեան երկրի ապագայ վիճակի ներկատմամբ և նսլաստեցին ռուսաց տիրապետութեան տարածուելուն Կովկասում:

Սիմէոն կաթողիկոսը ջերմ երախտագիտութիւնից դրդուելով, որի մասին խօսուած է 10 յուլիսի 1771 թ. կոնդակի մէջ, մի եկեղեցական մաղթանք շարադրեց Ռուսաց Կայսրի և ամբողջ Կայսերական տան համար, որ կատարուելու էր արքայական տօներին: Այդ մաղթանքը, որ կազմուած է մի շարք սաղմոսներից, աղօթքներից, Աւետարանի և Գործք Աւաքելոցի պատշաճ հատուածներից, սկսւում է հետևեալ օրհնեզոթութեամբ:

«Ամենազօր Աստուած և Թագաւոր յաւիտենից, որ ի պատկեր քո երկնաւոր և աներևոյթ Թագաւորութեանդ, հատատեցեր յերկրի Թագաւոր (այս անուն) ի կառավարել և ի պահպանել զքո ժողովուրդ. պահեա՛ զսա անսասան և անպարտելի:

«Աղբիւր կենաց և պարգևիչ խաղաղութեան և զօրացուցիչ քոյոց ծառայից. յաւել զկեանս խաղաղականս ի քէն պատկեցեալ Արքայիս մերոյ (այս անուն) և զօրացո՛ ի Թշնամեաց պատերազմի ի փառս անուանդ և ի պայծառութիւն եկեղեցւոյ քում սրբոյ. յորում փառաւորի անդադար տէրութիւնդ քո:

«Բարձրացո՛ Տէր 'և փայլեցո՛ զգաւազան իշխանութեան Սորա ընդ ամենայն ծագս երկրի. ընդարձակեա շառաւիղօք և հարազատ ժառանգակցօք մինչև ի կատարած աշխարհի. այլ և օրհնեա՛ և պահպանեա զամենեւեան, որք ընդ իշխանութեամբ սորին ենթադրին, յորոց փառաւորի անդադար տէրութիւնդ քո:

«Թագաւոր երկնաւոր՝ զեկեղեցի քո անշարժ պահեա՛ և զերկրպագուս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան»:

Վերջապէս աւագ հոգևորականներից մէկը չորսո՛ կարողում է նոյն ինքն Սիմէոն կաթողիկոսի յօրինած աղօթքը, որի

մէջ բացորոշ արտայայտուել են հայ ազգի մտքերն ու զգացումները դէպի Ռուսիան և ռուսաց վեհապետները: Այդ աղօթքի բովանդակութիւնը բաղուածօրէն յառաջ ենք բերում:

«Եւ արդ՝ մեք ամենեքեան խոնարհալ անկանիմք առաջի քո և մեծաւ պաղատանօք հայցեմք յամենառատ յողորմութենէդ քումմէ, (Տէր Աստուած մեր) զի շնորհեսցես զՍաւ մեզ (զայս անուն) ամէնողորմած Կայսրն ամենայն Ռուսաց ընդ երկայն աւուրս արդարադատ և իրաւախոհ թագաւորութեամբ. յատկապէս շնորհք. ողորմութիւն և օգնականութիւն քո անպակաս արասցես ի սմանէ... Զթագաւորութիւն Սորա յաղթօղս, զօրաւորս և անպարտելիս արասցես ի վերայ ամենայն թագաւորութեանց. ձեռն քո ընկալցի և բազուկ քո զօրացուցէ զսա. զթշնամիս սորա հալածականս արասցես. և զյարուցեալսն ի վերայ սորա ի ներքոյ ոտից սորա արկցես: Քո ամենայաղթ զօրութեամբդ և սրբոյ խաչիդ նշանաւն ամրացուցես և պարսպեալ պահպանեսցես զսա և զթագաւորութիւն սորա յամենից յերևելեաց և յաներևութից թշնամեաց: Անեցուցես և պտղարբերս արասցես զսա արքայազնօք և քոյապարզ և զաւակօր: Անպակասելի և անթառամելի արասցես զթագաւորութիւն սորա յազգէ յազգ և յորդոց յորդիս մինչև ի կատարած աշխարհի... Նոյնպէս և զսիրտ քոյապսակ թագաւորիս մերոյ (այս անուն) քաղցր և զթած պահեսցես առ ամենայն ստորագրեցեալսն իւր և մանաւանդ առ ազգս Հայոց. ընդ Որոյ հովանաւորութեամբն մնալով ի խաղաղութեան, փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Այդպէս են աղօթում հայերը ռուսաց Կայսրի համար, այդպէս էլ աղօթել են Նրա համար դեռ այն օրերում, երբ հայերի հայրենիքն և հայրապետական Աթոռը ռուսաց պետութեան սահմանների մէջ չէին մտած:

Սիմէոն Կաթողիկոսը Բարձրագոյն հրովարտակի զօրութեամբ 1773 թ. Ռուսաստանի հայոց վիճակաւոր առաջնորդ կարգեց իշխան Յովսէփ Արղութեան-Որկայնաբազրւիկին: Այդ ընտրութիւնն էջմիածնի հովուապետի իմաստութեան և հեռատեսութեան ապացոյց էր: Յովսէփ Արղութեան-Որկայնաբազրւիկ արքեպիսկոպոսը ծագում էր մի ակնաւոր իշխանական դարմից և վսեմ մտքի ու հոգի կրթութեան տէր անձն էր՝ գեղեցիկ ու պատկառելի դէմքով, խոշոր ու մտածկոտ աչքերով, որոնք

գրաւում էին նայողի ուշադրութիւնն ու համակրանքը. այդ յատկութիւնների շնորհիւ նա շուտ մուտք գտաւ Կայսրուհու և Թափաթառանգի մեծագոյեցիկ վրանիկների տներում:

Արքեպիսկոպոսին յատուկ թափանցիկ ու նուրբ միտքը, բնածին խոհականութիւնը, ընդարձակ գիտելիքներն և այն դարու քաղաքագէտներին զբաղեցնող արեւելեան երկիրների կացութեան ծանօթութիւնը հնար տուին նրան, չնայելով իւր երիտասարդական հասակին (ծնուած էր 1743 թ.) և ռուսերէն չգիտենալուն, վաստակել այնպիսի անձանց համակրանքն ու վստահութիւնը, ինչպէս էին վսեմափայլ Գ. Ա. Պոտեոմկին իշխանը, Ա. Վ. Սուվորովը, Ն. Ի. Պանին և Վ. Ջուրովը: Իշխան Յովսէփ արքեպիսկոպոսի դատողութիւններն արեւելեան քաղաքականութեան վերաբերեալ խնդիրներում այն աստիճան կարևոր էին Գ. Պոտեոմկին իշխանի, Սուվորով, Ն. Ի. Պանին և Վ. Ջուրով կոմսերի կարծիքով, որ դրանք բացէ ի բաց անհրաժեշտ գտան նրա ներկայութիւնն երկրորդ տաճկական և պարսից պատերազմների ասպարիզում, և նա ուղեկից եղաւ ռուսաց զօրքին այդ արշաւանքների ժամանակ:

Սրբազանի հոյակապ ձիրքերը, երկու արքունեաց և բարձրագոյն կառավարչական շրջաններին մերձաւոր լինելը, ինչպէս և Օրթոդոքս եկեղեցու գլխաւոր հովիւների՝ այն է Մոսկուայի Պատոն միտրոպոլտի և Ս. Պետերբուրգի Գաբրիէլ միտրոպոլտի հետ բարեկամական յարաբերութիւններ ունենալը շատ նպաստեցին նրա Հայաստանեայց եկեղեցու և հայ ազգի զանազան կարեաց հեղինակաւոր և ազդեցիկ ներկայացուցիչ հանդիսանալուն: Փառասէր էր նա, սակայն ձգտում էր յագեցնել այդ զգացմունքը ծառայելով և օգուտ տալով այն պետութեան, որին անկեղծ նուիրուած էր, և իւր ազգին, որին ի բոլոր սրտէ անձնանուէր էր: Յանուն նորա զրուած հրովարտական և ուրիշ թղթերը ցոյց են տալիս, թէ կառավարութիւնը որքան էր գնահատում նրա մատուցած ծառայութիւնները. Եկատերինէ Կայսրուին և Պօղոս Կայսրը յաճախ ընդունում էին նրան մասնաւոր ունկնդրութեան համար և արքայական պարգևներով լիացնում նրան: Եկատերինէ Կայսրուհին ընծայեց նրան մի չքեղ փիլոն, վեղարի մի ականակուռ խաչ և Թանգագին մատանիներ. իսկ Պօղոս Կայսրը Ս. Աննայի առաջին կարգի պատուանշանը շնորհեց նրան և բարձրացրեց դերդաստանով հանդերձ յաստիճան իշխանութեան ռուսաց

պետութեան, մինչդեռ նրա տոհմը մինչև այն ժամանակ միայն վրացի իշխանութեան կոչումն ունէր:

Իշխան Յովսէփ արքեպիսկոպոսի Ռուսաստան ժամանելուց եօթը տարի յետոյ, այն է՝ 26 յուլիսի 1780 թ. Սիմէոն կաթողիկոսը վախճանուեցաւ, և օգոստոսի 2-ին Էջմիածնի միաբանութեան ընտրութեամբ կաթողիկոս օծուեցաւ Կարենցի Ղուկաս արքեպիսկոպոսը, որ Սիմէոնի մտերիմ գործակիցն էր՝ հանգուցեալը մահուան ժամին Էջմիածնի միաբանութեան հետ խօսակցելիս՝ նրան էր մատնացոյց արել, որպէս իւր յաջորդի: Սակայն նրա ընտրութիւնը, կամ լաւ է ասել՝ ընտրութեան եղանակը, մի քանի կնճիռներ առաջ բերաւ Կ. Պոլսի հայոց պատրիարքի կողմից: Այն ժամանակ ծայրագոյն կաթողիկոսի համազգային ընտրութեան սկզբունքը հետեւեալ կերպով էր իրագործուած. Էջմիածնի միաբանութիւնն և Պարսկաստանի (գլխաւորապէս Արարատեան նահանգի) հայոց ներկայացուցիչները հաւաքաբար ընտրում էին մի կամ մի քանի կանգնիտատ և իրենց որոշումն այդ մասին Կ. Պոլսի առաքում Կ. Պոլսի հայ ժողովուրդը, ի դիմաց Թիւրքիայի հայոց, ընտրում էր առաջարկուած կանգնիտատներից մէկին, որի համար և Թիւրքիոյ պետութեան սահմանների մէջ իրաւասութիւն չնորհող բերաթա խնդրում Սուլթանից:

Էջմիածնի միաբանները, վախենալով մահմեդական խաների միջամտութիւնից կաթողիկոսի ընտրութեան մէջ՝ և մանաւանդ Նրեանի խանի, որ Գանձասարի կաթողիկոսի դրդմամբ հակամէտ էր պաշտպանել դրա թեկնածութիւնը հայրապետական Աթոռին, — փութացին սրբազնագոյն Սիմէոնի մահից յետոյ՝ իրենց ընտրածին նստեցնել թափուր մնացած Աթոռի վրայ և նրան կաթողիկոս օծեցին՝ առանց զեկուցում տալու այդ մասին Կ. Պոլսի հայ ժողովրդեան:

Այդ հանգամանքն առիթ տուաւ Կ. Պոլսի Զաքարիա պատրիարքին, որ կարծեօք ինքն էր ուզում Սիմէոնին յաջորդել, պնդելու, թէ Ղուկասն ռուսաց ընտրութեան ազգի է օծեալ, և թէ նա՝ Զաքարիան անկաւրելի է համարում բերաթա խնդրել Սուլթանից և կարգադրել, որ Ղուկասի անունն եկեղեցիներում յիշատակուի: Կ. Պոլսի պատրիարքի այդ ընթացքը շատ էր տագնապում խաղաղասէր Ղուկասին: Նա ցաւում էր ոչ այնքան իւր անձնասիրութիւնը չօչափուած համարելով, որքան Մայր Աթոռի սրբութեան և հեղինակութեան նսեմանալուց:

երկիւղ կրելով, որովհետեւ նրա հակառակորդը, փորձում էր սահմանափակել Մայր Աթոռի իրաւունքները, ինչպէս գրում էր Ղուկաս կաթողիկոսը Զաքարիայի մասին, և աշխատում էր Վանկոնսարհի իշխանութիւն սրբոյ Աթոռոյ տարկանել ի ներքոյ ստորագրելոց իւրոց: Սրբազնագոյն Ղուկասն իւր կոնդակի մէջ ի 15 դեկտեմբերի 1780 ամի, որ ուղղուած էր Կ. Պօլս, անկեղծաբար յայտարարում է, թէ նա սրբաբար համարեց ընդունել ընտրութիւնն աչքի առաջ ունենալով հայրապետական Աթոռի օգուտը և թէ ինքն արդար և ծանր մեղադրանքի կենթարկուէր, եթէ մերժէր այդ ընտրութիւնը: Ապա թէ Կ. Պօլսի պատրիարքի բողոքը մի վերաւորուած անձնասիրութեան վերագրելով, հայրապետը քրիստոնէական հեզութեամբ յօժարութիւն է ցոյց տալիս նրան թողնել իւր տեղն և յետ քաշուի իբրև մի սոսկ արեղայ, եթէ տահկահայոց ընտրութիւնը Զաքարիայի վրայ կայանայ: Ղուկաս կաթողիկոսը՝ սմբոյշ ժամանակ, մինչ իւր ընտրուելու առթիւ թղթակցութեան մէջ էր Զաքարիայի հետ, ձեռնպահ էր մնում որ և է կարգադրութիւն անելուց, որպէս կաթողիկոս, և նոյն իսկ Էջմիածնի մայր տաճարի հայրապետական Աթոռի վրայ չէր նստում: Նրա կոնդակներին մեզ հասած ժողովածուի մէջ յառաջ են դալիս պատմութեան արժանի տղերք, ուր տպաւորուած են նրա խոնարհութիւնը, բարեպաշտութիւնը, կորովի միտքը, անձնուիրութիւնը Մայր Աթոռին և այն խորին վիշտը, որ մաշում էր նրան, երբ փորձում էին աղաւաղել այդ Աթոռի իրաւունքներն և կամ զլանում արժանաւոր յարգանք ընծայել նրա հեղինակութեան, Կ. Պօլսի ռուսաց դեսպան Թամարան իւր զեկուցագրի մէջ 30 մայիսի 1801 ամի գրում է. «Ղուկաս կաթողիկոսը, որին անձամբ ճանաչել եմ, հայոց վարչական գործերում պատուական յատկութիւններ ցոյց տուող մարդ է, և նրա նուիրական, թէև համեստ, բայց լուսամիտ փափազն է վերականգնել իւր ազգը Ռուսաստանի օգնութեամբ, երբ որ վերջինիս հանգամանքներն ու վիճակը յոյս տան իւր հովանաւորութեան դիմելու յօգուտ, այլ ոչ ի կորուստ հայ ազգի»:

Սրբազնագոյն Ղուկասի այդ դժուար կացութեան վախճան դրին Կ. Պօլսի հայ ժողովրդի ներկայացուցիչները, որոնք երկիւղածութիւն և որդիական հաւատարմութիւն զգալով դէպի Էջմիածինը, յաջողացրին պաշտօնանկ անել Զաքարիա պատրիարքին. այնուհետեւ նրա յաջորդը, որը պառակտման ա-

ջակցելու տրամադիր չէր. փութաց Ղուկասի համար բերաթ ձեռք բերել Բ. դռնից և կարգադրեց յիշատակել նրա անունը եկեղեցական պաշտամունքներում: Ղուկաս կաթողիկոսն Աթոռի վրայ հաստատուելուն պէս 1780 թ. սովորական օրհնութեան կոնդակ առաքեց իւր հօտին, որի մէջ Սիմէոնի վախճանուիլը ծանուցանելով, յայտնում էր իւր նորան յաջորդ ընտրուելը: Ռուսաստան ուղարկած իւր անդրանիկ կոնդակում նախ և առաջ մաղթում էր Աստուծու օրհնութիւնը ռուսաց ազգի աստուածապահ ու բարեկեցիկ երկրի վերայ և Աստուծով կարգուած ու նրանով զօրացած, խաչապսակ բարեպաշտ օգոստափառ մեծ Խնքնակալ Եկատերինէ Կայսրուհու և նրա տիրախնամ Ժառանգ Որդու Աստուծով զօրացած Մեծ Իշխան Պաւէլ Պետրովիչի և բարեփառ Մեծ Իշխանուհու Մարիա Ֆեոդորովնայի և նրա տիրաձիր մատաղ որդոց՝ Ալէքսանդր և Կոնստանդին Պաւլովիչների վրայ: Ապա թէ Սիմէոն կաթողիկոսի մահուան հանգամանքներն և իւր կաթողիկոս ընտրուիլն և օծուիլը հաղորդելով, մաղթում էր Աստծոյ օրհնութիւնը համայն հօտի և սուրբ Աթոռի հաւատարիմ որդու՝ Յովսէփ Արղութեան արքեպիսկոպոսի վրայ, և վերահաստատելով նրան պաշտօնի մէջ. որպէս զի նա 'ի կատար ածէ իւր սկսած աստուածահանոյ գործերը, պատուիրում է առաջուայ պէս որդիական սիրով հնազանդուել իրեն և աջակցել ամեն բանում:

Ինչպէս վերն ասացինք, Սրբազնապոյն Ղուկաս կաթողիկոսը շատ նախանձախնդիր էր Մայր Աթոռի գերագոյն իրաւունքների պահպանութեան: Իւր նախորդինման՝ նա էլ զգուշանում էր Գանձասարի Իսրայէլ կաթողիկոսի դաւերից և հրակում, որ դա չփորձէ ընդարձակել իւր իշխանութիւնը ռուսապատակ Հայոց վրայ: Այս նպատակով Ղուկաս կաթողիկոսը հետևում էր 1768 թ. Բարձրագոյն հրամանի գործադրութեան, այսինքն որ ոչ մի հայադաւան եկեղեցական իրաւունք չունենայ առանց Էջմիածնական հայրապետի զրաւոր թոյլտուութեան մուտք գործել Ռուսաստան, և դարձեալ Սիմէոն կաթողիկոսի նման ստէպ ստէպ օրհնութեան թղթեր և աղերսական կոնդակներ էր գրում սահմանամերձ քաղաքների հրամանատարներին, որ ստորագրեալ պաշտօնեաները խստիւ ջանան վերոյիշեալ Բարձրագոյն հրամանի սահմանած պահանջը կատարել: Կայսերական կառավարութիւնը ռուսաց պետութեան սահմանների մէջ Հայաստանեայց եկեղեցուն և Մայր Աթոռին

հովանաւոր լինելուց զատ՝ չէր զլանում նաև մահմեդական երկիրներում հայերին թեւարկու հանդիսանալ իւր ներկայացուցիչներին միջնորդութեամբ։ Այսպէս՝ երբ 1780 թ. Յովսէփ արքեպիսկոպոսը Ղուկաս հայրապետի պատուէրով խնդիր տուաւ Արտաքին Գործոց Ատենին, որպէս զի յանձնարարուի Օսմանեան պետութեան մօտ կարգուած դեսպանին՝ կարեոր դէպքերում «օգնել ու պաշտպանել հայոց Հայրապետի նուիրակներին Թիւրքիայի մայրաքաղաքում», — այդ առթիւ 23 յունուարի 1781 թ. մի Բարձրագոյն դիր առաքուեցաւ յանուն Կ. Պօլսի ռուսաց դեսպան ստատսկի սովետնիկ Ստախէյեւի, ուր ի միջի այլոց ասուած էր. «Ի նկատի առնելով այդ Հայոց Հայրապետի մշտաւ անձնուիրութիւնը Մեր Դահլիճ և Հայերի քրիստոնեայ լինելն, և այն հանգամանքը, որ նրանցից շատերը Մեր պետութեան մէջ են բնակւում և ընդ միշտ Մեզ հպատակ են, Մենք ամենայն ողորմածութեամբ յօժարամիտ ենք ամեն պատեհ դէպքերում ցոյց տալ Մեր արքայական բարեմտութեան և ձեռնտութեան հաւաստիքը թէ՛ նոյն Հայրապետին և թէ՛ ամբողջ Հայ ազգին։ Ուստի այսու կամեցանք իմացնել ձեզ, որ Հայոց Հայրապետը ոչ միայն ընդունած է Մեր Կայսերական հրովարտակն և ըստ այնմ հրամաններ առաքուած են մի քանի սահմանամերձ տեղեր, և թէ այժմ նոյն հրամաններն առաքուած են նաև Ազովի ու Նովորոսիյսկի նոր հահանգների վրայ, այլ՝ թէ դժուր ևս պարտաւոր էք համակերպուել այն հրամաններին ումեն յառաջ եկած դիպուածներում։ Հաճել է Մեզ նմանապէս, որ այն ամեն տեղերում և դէպքերում, ուր Մեր ծառայութեան և Մեր բուն հպատակների անմիջական առևտրին մնաս չլինի, և Մեր ուղղափառ եկեղեցու հետ միակրօն և այժմ տաճկական լծի տակ հեծող յունաց եկեղեցուն ռսոխութիւն չյայտնուի և վերջապէս ճւր և երբ Ձեզ յանձնուած կոչման պատուին նուազումն բերող բան չը յայտնուի, — այդ ամեն պարագաներում Դուք Ձեր բարի ջանքը Հայոց Հայրապետի Ձեր ծառայութեան տեղն առաքած նուիրակների օգտին գործ դնէք, ըստ որում նրանք քրիստոնէական օրէնք դաւանողներ են, և մարդասիրութեան և սոյն հրահանգներին համեմատ ամեն պատշաճաւոր օժանդակութիւն ընծայէք նրանց»։


26 փետրուարի 1798 թ. Բարձրագոյն հրովարտակ շնորհուեցաւ յանուն Ղուկաս կաթողիկոսի և համօրէն Հայ ազ-

զի և 16 մարտի 1798 ամի Կ. Պօլսի Թաժարա դեսպանին ուղղուած հրամանագրով կրկնուեցաւ՝ ճամն կարելի օգնութիւն և պաշտպանութիւն հասցնել Հայոց Հայրապետից՝ Թիւրքիոյ մայրաքաղաքն առաջած եկեղեցական պաշտօնեաներին բոլոր դէպքերում և յամենայնի վարուիլ այն հրովարտակին (28 յունիւ. 1781 ամի) համեմատաւ:

Այդպէս էր ռուսաց կառավարութեան ընթացքն առ հասարակ Հայ ազգի և 'ի մասնաւորի Հայաստանեայց եկեղեցու վերաբերմամբ. և այդ ընթացքն արտայայտում էին ոչ միայն գահի բարձունքից արձակուող հրովարտակները միայն, հապա և առանձին դէպքերում նոյն իսկ պետական անձինք, ինչպէս որ տեսնում ենք Ղուկաս կաթողիկոսի թղթերից առ վսեմափայլ Պոտեօմկին իշխանը, Րումեանց և Կոմսը, Պանին Կոմսն և այլն, ուր Հայրապետն այդ թղթերով շնորհակալութիւն է յայտնում նրանց, որ նրանք հովանաւոր են Հայոց ազգին, բարեւէր են դէպի Մայր Աթոռն և բարեկամ ու ձեռնտու իշխան Արղութեան արքայիսկոպոսին:

Ղրիմի խանութիւնը Թիւրքիայից անկախ հրատարակող Քուչուկ-Վայնարջեան հաշտութիւնից յետոյ ռուսաց պետութիւնը ձեռնամուխ եղաւ մարդաբնակ դարձնել նոր զրաւած Նովորոսիյսկի երկիրը: Կառավարութիւնը յարմար դատեց գաղութեցնել այդ շրջանը Ղրիմի յոյներին ու հայերին և սկսաւ զանազան արտօնութիւններ խոստանալ նրանց, որ յանձն առնեն կայսրութեան սահմանների մէջ բնակուել: Նա հրամայեց ճամն կերպով յորդորել այն քրիստոնեաներին, որպէս զի մեր կողմը գան, և յուսադրել նրանց, թէ Կայսերական հովանաւորութիւն կըստանան և այն բոլոր նպաստները, որոնք անհրաժեշտ կըլինին սկզբում: 9 մարտի 1778 թ. Բարձրագոյն հրամանը յանուն վսեմափայլ Պոտեօմկին իշխանի պատուիրում էր՝ ճամնայն քաղցրութեամբ ընդունել և ճանապարհի պաշար ու պարէն մատակարարել Ղրիմից գաղթելու յօժարութիւն յայտնող բոլոր յոյներին, հայերին և վրացիներին... որպէս զի այդ նոր գիւղացիք մեր սահմանները ստք դնելու օրից սկսած ոչ միայն ուտելիքի ոճր և կարիք չզգան, այլ և Ձեր անօրէնութեամբ բաւարար երկիր ու տնտեսութեան բոլոր պէտքերը մեր դանձարանից ստանան. բացի այդ մենք չենք յապաղել կարևոր արտօնութիւններ շնորհել նրանց: Ղրիմի քրիստոնեայ բնակիչներն, առանց դաւանանքի խտրութեան, յունաց միտրոպո-

4704
7A-1203



լիտի միջնորդութեամբ խնդրեցին տալ իրենց պետական կնիք կրող մի արքունի հրովարտակ, որ Բարձրագոյն անուամբ խոստացուած արտօնութիւնները վաւերացնէր, և այդպիսով գեղջուկների կասկածները փարատուէին: Հայերն իրենց կողմից ռուսաց կառավարութեան հրաւերն ընդունեցին. մահմեդական լծից ազատուելու և հզօր քրիստոնեայ պետութեան հովանին գտնելու յոյսը այն աստիճան ոգևորել էր նրանց, որ ամենևին չվախեցան տեղափոխութեան վտանգներից:

Ղրիմի խանն և ամբողջ մահմեդական ազգաբնակչութիւնը Ռուսաստանի այդ ձեռնարկութեան լուրն անհելուէն պէս վերին աստիճան շփոթուեցան. քրիստոնեաների գաղթն ահագին չարիք էր սպառնում նրանց և անշուշտ պիտի վնասէր նրանց նիւթական բարօրութեան, քանի որ արդիւնք տուողը միայն քրիստոնեայ ժողովուրդն էր: Սկզբում խանը չէր հաւատում լրի ստուգութեան և բացատրութիւն խնդրեց գեներալ պորուչիկ Ա. Վ. Սուվորովից, որ և պատասխան տուաւ, թէ կայսրուհին մարդասիրութեան զգացման և քրիստոնէական սլարտքին հետեւելով, հաճել է իւր սահմանները տեղափոխել քրիստոնեաներին, «որպէս զի նրանք մօտալուտ աղէտներից և սպառսպուռ կոտորածից փրկուին»: Ապա Սուվորովը յոյս է յայտնում, թէ խանը ոչ միայն չի հակառակուիլ, այլ դեռ չեղապատուոր կը լինի, և յարուստ՝ «որովհետեւ Ձեր անձի մօտին հոգ կը տարուի և 'Իռք վարձատրութիւն կըստանաք»: Այդ յուսադրութիւնը ոչ միայն չմիամտացրեց խանին և միջոցներին, այլ կատաղութիւն պատճառեց նրանց: «Վսեմափայլ խանը», գրում էր Պոտեմկին իշխանը Սուվորովին, «զայրոյթից ուժասպառ լինելով, Բախչիսարայից դուրս գնաց՝ օգափոխութեան համար»: Նոյնչափ դժգոհ էին և Ղրիմի թաթարները, որոնք ասում էին, թէ քրիստոնեաներին կորցնելն իրենց համար «հոգին մարմնից անջատելուն հաւասար է»: Եւ իրը թաթարները տեսան, որ «սպառնալիքով, յորդորանքով խոստումներով և իրենց յատուկ ուխտադրութեան հետգութիւններով» նպատակին հասնել անկարող են, սկսան աղերսական գրեւ և նոյն իսկ պատգամաւորներ ուղարկել ռուսաց արքունիքը. սակայն և այնպէս նրանց բոլոր ջանքերը, Ղրիմում պահելու հայերին, զուր անցան: Սուվորովի կարծիքով՝ «պէտք է վարձատրել թաթարներին մի քանի մասնաւոր սլարտքերի փոխարէն... իսկ քրիստոնեաներին անհրաժեշտ է նրանց կորցրած կապերի և

յատկապէս այգիների փոխարէն գոհացնել, մանաւանդ որ նը-
րանցից շատերը միայն դրանցով են ապրուստ ձարում: Նոյն
Սուվորովը 30 յուլիսի 1778 ամի զեկուցանում էր Րուսմանցե-
Ջադոնայսկի կոմսին, թէ «Գրիստոնեաների գերագոյն փափազն
այն է, որ նրանք միասին և արդիւնարեւր տեղերի վրայ բնա-
կեցուին... Նրանք ցաւելով են թողում իրենց հայրենի անշարժ
կայքը՝ ուստի ես ստիպուած էի խօստանալ հէնց այստեղ վար-
ձատրել նրանց արքունի գանձարանից, ապա թէ ոչ՝ չէին յօ-
ժարուիլ դուրս գալթել:»

Սուվորովի զեկուցմամբ Հայոց գաղթումն սկսուեցաւ
1778 թ. յուլիսի վերջին օրերը: «Փառք Աստուծոյ», գրում էր
նա. գաղթականութիւնն սկսուել է: Նոյն թուականի օգոստոս
ամսին հայերը Մարկոսեան Պետրոս վարդապետի առաջնոր-
դութեամբ նոր հայրենիքի սահմանը մտան: Իայց այդ տեղ
առաջին իսկ քայլափոխին ամեն տեսակ անսպասելի աղէտներ
պաշարեցին նրանց... Եկատերինէի փոյթն և Պոտեմկին իշ-
խանի ու Սուվորովի նման աշխատակիցների ջանքը՝ ըստ կա-
րելոյն շատ դիւրութիւններ տալու Ռուսաստան գաղթող ե-
կուորներին՝ կարծես թէ համակրութիւն չէին գտնում բնակու-
թեան համար որոշուած տեղի մերձաւոր իշխանութիւնից: Ոչ
միայն բաւարար պարէն ու տեղափոխութեան միջոցներ չէին
պատրաստուած, այլ մինչև անգամ երկրի այն մասերը չէին
սահմանուած, ուր որ նորեկները պիտի նստէին: Գաղթական-
ները Սկատերինոպոլս և Սամարա (արդի Նովոմոսկովսկ) հաս-
նելուն պէս ստիպուեցան կանգ առնել և այդ տեղ բացօթեայ
մնալով, առաջին անգամ ծանօթանալ մինչև այն ժամա-
նակ իրենց անյայտ հիւսիսային ձմրան խստութեան հետ, որ
նրանց չար բախտից, մանաւանդ այն տարին, առանձնապէս
խիստ էր: Հայերի կրած տառապանքն անհնարին է նկարա-
գրել. սառնամանիքը, ցուրտն ու հիւանդութիւնները նրանց թի-
ւը կիսով չափ նուազեցրին. շատերը ցիր ու ցան փախան,
շատերն էլ, որոնց հետ և Պետրոս վարդապետը, նոյն իսկ թուա-
կանին մեռան: Մնացածները՝ զարունը հասնելուն պէս սիրտ
առին Սուվորովին դիմելու: «Երբ մեզ Ղրիմից դուրս հանեցիք»,
գրում էին նրանք 18 ապրիլի 1779 ամի, «հաճած էիք, բացի
յայտնի 14 յօդուածներից, խոստանալ մեզ, թէ մեր թո-
ղած անեղի վիճակին՝ նրանց նման շինուած տներ կըտրուին
մեզ, տեղերը մեր ցանկութեամբ կորոշուին, թռչակն ու պա-

բէնը կը հայթայթուին: Սակայն մեր զաւուց յետոյ այնպիսի տեղեր յատկացրին մեզ, ուր ոչ ջուր կայ, ոչ անտառ. բայց այդ վայրերումն անգամ հարկադրում են ամենքիս գրով վկայել, թէ դրանք մեզ յարմար են, սակայն մենք այդպիսի վկայութիւն չենք կարող տալ, որովհետեւ այդ վայրերն անպէտք են: Սկզբում պարէն ու պաշարն ամենքին բաշխում էր. իսկ այժմ մի քանիսին տմենեկին չէ տրւում. երկրագործ մշակներին 120 վերստով անջատում են մեզանից... և մենք ոչ միայն նպաստ չենք ստանում, այլ դեռ աւագակների յափշտակութեան և ուրիշ կեղեքումների պատճառով, նոյն իսկ մեր յետին գոյքից զրկուած ենք և այնպիսի նեղութեան հասած, որ առաջուայ բարեկեցիկ մարդիկն անգամ այժմ մուրալով են հաց ճարում, իսկ միւսները սովից ստիպուած՝ մի չնչին գումարի կամ պատառ հացի փոխարէն իրենց զաւակներին ծախում են: Սովի պատճառով խաշած թեփն իբրեւ սնունդ գործածելուց շատ և շատ մանուկներ մեռան:

Այնուհետեւ Հայ պատգամաւորները նոյն թուականի յուլիսի 15 ին մի աղերսագիր ուղղեցին նաև Պոտեոմկին իշխանին, բացատրելով, թէ՝ ճերանք խնդրած էին Ս. Դիմիտրիյ Ռոստովցու արուարձանում նստեցնել իրենց, և այդ խնդիրը Ձերդ վսեմափառութեան հաւանութիւնը գտած էր. սակայն... Ազովի նահանգապետի օգնական (Азовской губернской Канцелярии губернаторскій товарищъ) Գարսևանովը բոլոր երկրագործներին ստիպում է թերս գետի վրայ հաստատուել և ամենասոսկալի եղանակով հրամայում, որ այն տիղ շինեն իրենց տները. բայց որովհետեւ նրանք յօժար չէին, ուստի ուսանց շղթայեց և մի քանի օր բռնի և անարգ աշխատութեան դատապարտեց (канальная работа): Բացի այդ՝ ամենքն էլ բնակելի տներ չունենալուց և միշտ անապատում մնալուց՝ արեգակի և ստէպ-ստէպ անձրևների տակ տանջւում են, ըստ որում ահա երեք ամսից աւելի է, որ նոյն նահանգապետի օգնականի հրամանով բնակարաններից արտաքսուած ենք և այժմ դուրսն ենք ապրում, և այս փոփոխութիւնների պատճառով շատերն արդէն մեռել են...» ուստի և աղաչում էին պատգամաւորները՝ «թոյլ տալ մեր ժողովրդին վերոյիշեալ Ս. Դիմիտրիյ բերդի արուարձանում և դրա շրջակայքում հաստատուել: Հայ գաղթականները ռուս իշխանաւորներին դիմելուց դատ՝ իրենց ողորմելի վիճակը նաև Յովսէփ արքեպիսկոպոսին

յայտնեցին, և Յովսէփը, որ այդ միջոցին Աթաբախան էր, փութաց գնալ Պեսեքըրդ միջնորդելու նրանց համար, ուր և հասաւ 5 օգոստոսի 1799 ամի:

«Պոսեփին իշխանը», գրում է եպիսկոպոսն իւր յիշատակարանում, «մեր գալստեան լուրն առնելով իսկոյն իւր մօտ հրաւիրեց մեզ, երկու ժամ խօսակցեց կրօնական խնդիրներէ, եկեղեցական ծէսերի, զգեստաւորութեան ու զարդերի և իմ մասին. շատ սէր ու յարգանք ցայց տուաւ մեզ և հրամայեց գալ հետեւալ օրը Քրիստոսի Այակերպութեան եկեղեցին, ուր տաճարական տօնի առթիւ ներկայ պիտի լինէր Կայսրուհին: Նկեղեցում՝ խորան հրաւիրեցին ինձ: Կայսրուհու ժամանելուն պէս՝ ես իշխանի ցուցման համեմատ արքայական դռնից դուրս գալով, գլուխ տուի Կայսրուհուն. իշխանը զեկոյց նրան իմ մասին: Պաշտամունքից յետոյ Կայսրուհին խորան մտաւ և ժպտալով ողջունեց ինձ»:

Կայսրուհու ողորմած ուշադրութիւնը Յովսէփ արքեպիսկոպոսին և վերջնոյս սերտ յարաբերութիւնները Պոսեփին իշխանի հետ հայ գաղթականների վիճակի դիւրացման նպաստեցին. նրանք ոչ միայն տեղ ստացան Ռօստովի մօտերը, «Իօն գետի վրայ, ինչպէս որ կամենում էին, այլ և մի առանձին արտօնագիր շնորհուեցաւ նրանց: «Եւ իմ խնդրածից աւելի ստացայ», գրում էր Յովսէփ արքեպիսկոպոսն իւր յիշատակարանում: Բարձրագոյն հրովարտակով ի 14 նոյեմբերի 1779 ամի առ Վեր ամենահաւատարիմ Մարկոսեան Պետրոս վարդապետն և ամբողջ հայադաւան զրիմեցի Հայ հասարակութիւնը՝ հրաման ելաւ հայերի յարմարագոյն բնակութեան համար տալ նրանց Ս. Դիմիտրի Ռօստովցու բերդի գաւառը՝ ուրոյն միւս գիւղերից...»: «Բարձրելոյ աջը թող ձեր բարեմիտ ընդհանուր ձեռնարկութիւնն օրհնէ», գրում է Կայսրուհին... «հաճ և հաւան ենք ոչ միայն ձեզ բոլորիւ Մեր գթաւատ հովանու ներքոյ ընդունել, հապա և Մեր սիրասուն գաւակներէ պէս սփռփել և ճնշման բարեկեցիկ անել ձեզ, որքան որ այդ կախուած է մահկանացուի փափագից և Մեր անընդհատ հօգատարութիւնից...»: Հրովարտակի 4-րդ յօդուածում ասուած է՝ «Ամենողորմածաբար յանձնարարում ենք Պետրոս ծայրագոյն վարդապետին հովուել իւր հետ Ղրիմից ելած բոլոր Հայ ժողովուրդը, և թոյլ ենք տալիս նրանց եկեղեցիներ և զանգակատուններ շինել և ազատօրէն ամեն սալտամունք կատարել

իրենց դաւանութեան համեմատ՝ և թող այդ վարդապետն և հայոց քահանաները միմիայն Արարատեան հայրապետական վանքում նստող Հայոց Հայրապետի իշխանութեան ներքոյ գտնուին...»:

«Պօլուդենկի» կոչուած սահմանավայրի մօտ Նախիջևան քաղաքը հիմնելուց և դրան 12 հազար դեսեստին արօտատեղի յատկացնելուց յետոյ՝ հրամայում ենք սահմանել մի մագիստրատ (խորհրդարան) և դրա մէջ ձեր օրէնքների ու սովորութիւնների համեմատ դատաստան կտրել և գործադրել ձեր միջից իսկ վիճակով ընտրուած աւագների ձեռքով, որոնք և կը վայելեն Ազովեան նահանգի շտատին համապատասխան աստիճաններ ու ռոճիկներ և փոխարքայի իրաւասութեան ներքոյ կըլինին: Իսկ քաղաքի և գիւղերի մէջ՝ ամեն կարևոր դէպքերում պաշտպանութիւն հասցնելու համար՝ կը կարգուին առաւանձին ռուս մեծաւորներ, որոնք պարտաւոր կը լինին՝ առանց միջամտելու այդ բնակիչների դատաւարութեան՝ միմիայն պաշտպանել նրանց և պատասխարել...»

Բարձրագոյն հրովարտակի վերոյիշեալ 4-րդ յօդուածը, որ բովանդակում էր Կայսրուհու հոգածու խնամքն իւր նոր հպատակների հոգևոր կարիքների նկատմամբ, չէր մոռնուած նոյն թուականի մայիսի 21 յանուն յոյն դաղթականների արձակուած հրովարտակում:

1780 թ. հայերն սկսեցին գետեղուիլ իրենց շնորհուած հողի վրայ, իսկ հետեալ թուականի ապրիլ ամսին Յովսէփ արքեպիսկոպոսը Նոր-Նախիջևան քաղաքի հիմքը դրաւ: Հիմնարկութեան տեղում նա հաստատեց և օծեց չորս հիմնաքար չորս Աւետարանիչների անունով և թափօր կատարեց. ապա թէ՛ զանազան ժամանակ թէ՛ քաղաքում և թէ՛ մերձակայ գիւղերում մի քանի եկեղեցի օծեց—իսկ քաղաքի շրջանից դուրս մի բարձրաւանդակի վրայ մի վանք շինուեցաւ և դրան կից՝ մի վարժարան և տպարան:

Միևնոյն թուականին Յովսէփ արքեպիսկոպոսը մի հոգևոր ատեան (կոնսիստորիա) կազմակերպեց Աժտարխանում և յետոյ նոյն թուականի սեպտեմբերի 9-ին օծեց Մոսկվայի հայոց եկեղեցին՝ յանուն Ս. Խաչի: Իսկ Պետերբուրգի հայոց եկեղեցին նա օծած էր աւելի առաջ, և յատկապէս 18 փետրուարի 1780 ամի: Այդ հանդէսը մի առանձին չքով կատարուեցաւ. ներկայ էին Պոտեօմկին իշխանն և ուրիշ բազմաթիւ

քարձրաստիճան անձինք: Սրբազանը մի հայերէն քարոզ կարողաց և դրա տպագիր թարգմանութիւնը բոլոր հանդիսականներին բաժանուեցաւ. և այդ քարոզի երկու փառակազմ օրինակները մատուցուեցան Պոտեօմկին իշխանի ձեռքով Կայսրուհուն և Մեծ Իշխանին: Կայսրուհին փետրուարի 23 մի հոյակապ պանագիա և ականակուռ խաչ առաքեց սրբազանին՝ ի նշան իւր բարեհաճութեան դէպի նա. իսկ մայիսի 3-ին սրբազանն արժանացաւ ներկայանալ Կայսրուհուն և մատուցանել նրան արքայական տան համար յօրինուած մաղթանքի տետրը, որի հեղինակը, ինչպէս արդէն ասած ենք, հանգուցեալ Սիմէոն կաթողիկոսն էր:

Մոսկվայի եկեղեցու օծումից յետոյ Յովսէփ արքեպիսկոպոսը մտադիր էր Աթաբախան վերադառնալ, սակայն Պոտեօմկին իշխանի փախազին զիջանելով ստիպուած էր փոխել իւր միաբը:

Պոտեօմկին իշխանն երկրորդ տաճկական պատերազմի նախապատրաստութիւններն աչքի առջև ունենալով, կամենում էր, որ սրբազանը նրա հետ Ղրիմ գնայ և ապա պատերազմում ուղեկցէ նրան: Սրբազանի մտերմութիւնն իշխանի հետ, նրա ծանօթութիւնն արեւելեան երկիրների և դրանց բարքերի աւ լեզուների հետ և մանաւանդ ազդեցութիւնը թիւրքական նահանգներում բնակուող Հայերի վրայ շատ օգտակար էին առնում նրա գտնուիլն իշխանի մօտ: Յովսէփ արքեպիսկոպոսը, որի վրանը Պոտեօմկին իշխանի վրանին կից էր, ժիր կերպով մասնակցում էր պատերազմական գործերի ընթացքին. իշխանի յանձնարարութեամբ նա մի քանի անգամ գնաց Մոլդաւիայի, Վալախիայի և Բուկովինայի հայաբնակ քաղաքներն և իւրաքանչիւր քաղաքի նուաճումից յետոյ նոյն իշխանի պատուէջով դուրս էր բերում հայերին և բնակեցնում Իուրոսարի մօտերքը, ուր այդպիսով մի նոր քաղաք առաջ եկաւ, որ Հայաստանայցի Լուսաւորչի անուամբ Գրիգորոպոլիս կոչեցին: Այս անգամ էլ ռուսաց կառավարութիւնը մի առանձին խնամք ցոյց տուաւ Հայ գաղթականներին. արքունի դանձարանից միջոցներ տրուեցան մի մայր տաճար, մի վանք, երկու ծխական եկեղեցի, մի առաջնորդարան և մի հոգևոր ատեան կառուցանելու համար, որին կից մտադիր էին հիմնել մի զմեռագիտաբարձունի գանձարանը յանձն առաւ նմանապէս չինել քաղաքային քարհրկարան, արհեստաւորների խանութներ, ջրանցք և այլն,

և բացի այդ՝ դրամական նպաստներ բաժանեց եկաւորներէր առաջին պէտքերը հոգալու համար:

Կայսրուհին, Հայերի գաղթը դէպի Ռուսաստան քաջալերելով, չէր մոռանում մի կողմից խրախուսել այդ գործում իրեն աջակցող Յովսէփ արքագանին. ուստի 25 մարտի 1793 ա-մի մի վեղարի խաչ պարգևեց նրան. միւս կողմից հրաւէր էր կարդում տեղական իշխանաւորներին օգնել իրեն և պատուիրում, որ իւր նոր հպատակների մասին ուշի ուշով հոգ տանեն: Այսպէս նա՝ Սկատերինոսլաւի նահանգապետի ուշադրութիւնը հրաւիրելով այդ նորեկ հայերի վրայ, 23 փետրուարի 1793 ամի հրովարտակի մէջ պատուիրում էր նրան՝ լաւից լաւ ապահովել նրանց կացութիւնը, «որպէս զի ոչ միայն մեր սահմաններն անցած հայերը պահուին, այլ և տարաշխարհում մնացող նրանց կրօնակիցները, եկաւորների բարօրութիւնը տեսնելով, գան միանան նրանց հետ»:

ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆ.

(Վերջը միւս անգամ)